600.0353.18.09.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2019 թվականի №353Ա
քաղ. Երևան

«ԱՅՓԻՏԵԼԵԿՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և «ԱՅՓԻՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ԱՅՓԻՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և Լոռու մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրել 5600-5605ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն՝ մինչև 2029 թվականի օգոստոսի 1-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «ԱՅՓԻՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Լոռու մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրվող 5600-5605ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ԱՅՓԻՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

№900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով տրամադրված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի սեպտեմբերի 19-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՍՅԱՆ**

ք.Երևան
18 սեպտեմբերի 2019թ.